

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ  
ԺԱՄԸ 14:45-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ԾԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ  
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. երևան**

**Մասնակցում էին`**

**Խորհրդի անդամներ`**

Տ. Սարգսյան	ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)
Ն. Երիցյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Գ. Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Մ. Թունասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

**Հրավիրվածներ`**

Հ. Նաղդալյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Վ. Խուրշուդյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Նռանյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Ա. Մարտիրոսյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ.Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Ա. Մայսուրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի միջազգային տնտեսական համագործակցության բաժնի պետ
Ա.Զալյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի գնումների գլխավոր մասնագետ
Ա. Գաբրիելյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի միջազգային տնտեսական համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետ

1. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության գործադիր տնօրենի մրցույթի արդյունքների ամփոփում

-----  
*(Զեկուցող՝ Մ. Վարդանյան)*

**1. Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Ս. Վարդանյանը** և նշեց, որ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության (ԾԻԿ) գործադիր տնօրենի ընտրության համար մրցույթը կայացել է երկու փուլով:

Առաջին փուլում մրցույթին ներկայացված 54 հայտերը քննարկվել և գնահատվել են Կառավարման խորհրդի կողմից ստեղծված մրցութային հանձնաժողովի կողմից: Ելնելով պաշտոնի նկարագրի պահանջներից՝ ուսումնասիրելով և գնահատելով հայտերը, կազմվել է վեց հոգուց բաղկացած «կարճ ցուցակ»: Երկրորդ փուլում կայացած հարցազրույցների և գնահատումների արդյունքում, «կարճ ցուցակում» ընդգրկված թեկնածուներից մրցութային հանձնաժողովի կողմից ընտրվել են հետևյալ երեք թեկնածուները՝ Փիրումյան Ֆելիքս, Հարությունյան Դավիթ, Պետրոսյան Հակոբ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Ս. Վարդանյանը ավելացրեց նաև, որ գնահատման արդյունքում ամենաբարձր միավորները հավաքել է Ֆելիքս Փիրումյանը: Հաշվի առնելով վերջինիս աշխատանքային փորձն ու գիտելիքները՝ Ս. Վարդանյանը առաջարկեց նրան հաստատել ԾԻԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնում:

## **2.Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության Գործադիր տնօրենի պաշտոնում հաստատել Ֆելիքս Փիրումյանին:

2) Հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝ մեկ շաբաթյա ժամկետում Ֆելիքս Փիրումյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

2. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության ձևավորման ընթացքի վերաբերյալ

-----  
(Ձեկուցող՝ Մ. Վարդանյան )

1. Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանը և նշեց, որ ԾԻԿ-ում նախատեսվում է ձևավորել 23 անձից բաղկացած հինգ բաժիններ՝ ծրագրերի նախապատրաստման, սոցիալական պաշտպանության, վերաբնակեցման և բնապահպանական, պայմանագրերի կառավարման, ֆինանսաիրավաբանական, ընդհանուր ծառայությունների:

Նախարարը նաև բարձրացրեց ԾԻԿ-ին համապատասխան տարածքով և տրանսպորտով ապահովելու խնդիրը:

## **2. Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հանձնարարել՝

ա. ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝ իրականացնել ԾԻԿ-ի մասնագիտական անձնակազմի՝ բաժնի պետերի և համապատասխան մասնագետների հաստիքների համալրման գործընթացը (պաշտոնի նկարագրերի մշակում, մրցույթների կազմակերպում, թեկնածուների ընտրության հաստատում): Չորս բաժինների՝ ծրագրերի նախապատրաստման բաժնի, սոցիալական պաշտպանության, վերաբնակեցման և բնապահպանական բաժնի, պայմանագրերի կառավարման բաժնի և ֆինանսաիրավաբանական բաժնի պետերի ընտրության արդյունքները ներկայացնել Կառավարման խորհրդի հաստատմանը:

բ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ Կ. Կիրակոսյանին՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանի հետ

համատեղ քննարկել ԾԻԿ-ի համար տարածքի վարձակալության հետ կապված հարցը և ՀՀ կառավարություն ներկայացնել համապատասխան առաջարկություն:

գ. ԾԻԿ-ի գործադիր տնօրենին՝ ապահովել ԾԻԿ-ի ընդհանուր ծառայությունների բաժնի համալրման գործընթացը:

3. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման նպատակով խորհրդատվական ընկերության և ճանապարհային ծածկի միջազգային մասնագետի ընտրության մրցույթի հաղթողների հետ կայացած բանակցությունների արդյունքների հաստատում

-----  
(Ձեկուցող՝ Ա. Ջալյան)

1. Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի գնումների գլխավոր մասնագետ Ա. Ջալյանը և նշեց, որ Ծրագրի առաջին տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման նպատակով խորհրդատվական ընկերության մրցույթում հաղթող ճանաչված «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է իր տեխնիկական և ֆինանսական առաջարկները: Կազմակերպության կողմից ֆինանսական առաջարկի գումարը կազմել է 123,287,639.00 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ): Բանակցությունների նպատակով ստեղծվել է բանակցող թիմ: Բանակցությունների արդյունքում ֆինանսական առաջարկի գումարը նվազեցվել է մինչև 98,734,401.00 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ): Քանի որ այն գերազանցում էր առաջադրանքը իրականացման նպատակով ԱԶԲ-ի կողմից նախատեսված բյուջեն, ապա բանակցությունների արդյունքները համաձայնեցվել են նաև ԱԶԲ-ի հետ:

Քանի որ ճանապարհային ծածկի միջազգային մասնագետի ընտրության մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Ռիչարդ Բեննետը հրաժարվել է աշխատանքների իրականացումից, «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը դիմել է կարճ ցուցակում հաջորդ՝ առավելագույն միավորներ ստացած թեկնածուին՝ Բենտ Լարսեն անհատ խորհրդատուին: Խորհրդատուն ներկայացրել է իր պայմանագրային գինը, որը կազմում է 47000 ԱՄՆ դոլար (առանց ոչ-ռեզիդենտի եկամտահարկի և ԱԱՀ-ի): Պայմանագիրը ստորագրելու վերաբերյալ ստացվել է ԱԶԲ-ի համաձայնությունը:

## 2. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Ծրագրի առաջին տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման նպատակով խորհրդատվական ընկերության և ճանապարհային ծածկի միջազգային մասնագետի ընտրության մրցույթների հաղթողների հետ կայացած բանակցությունների արդյունքները:

2) հանձնարարել ՀՀ Ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն Է. Ավետյանին՝ բանակցությունների արդյունքների հիման վրա ստորագրել համապատասխան պայմանագրերը:

4. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ծառայությունների տեխնիկական առաջադրանքի հաստատում

-----  
(Ձեկուցող՝ Ն. Երիցյան)

1. Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը և նշեց, որ Ծրագրի առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ծառայությունների տեխնիկական առաջադրանքը ներկայացվել և շրջանառվել է շահագրգիռ նախարարություններին և գերատեսչություններին, ստացված առաջարկությունների ու դիտողությունների հիման վրա այն լրամշակվել է: Տեխնիկական առաջադրանքի վերջնական տարբերակը համաձայնեցվել է նաև ԱԶԲ-ի հետ:

## 2. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ընկերության ընտրության տեխնիկական առաջադրանքը:

2) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն Է. Ավետյանին՝ հայտարարել առաջին տրանշի շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության և երկրորդ տրանշի մանրամասն ինժեներական նախագծի պատրաստման աշխատանքներն իրականացնող խորհրդատվական ընկերության ընտրության մրցույթը:

5. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի երկրորդ տրանշի նախապատրաստական աշխատանքներ

*(Զեկուցող՝ Ն. Երիցյան, Մ. Վարդանյան)*

1. Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը և նշեց, որ ապրիլի 16-ին ԱԶԲ-ի ղեկավարության հետ կայացել է տեսակոնֆերանս, որի ընթացքում մի շարք հարցերի հետ մեկտեղ քննարկվել են Ծրագրի երկրորդ տրանշի հետ կապված հարցերը: Համաձայնություն է ձեռք բերվել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի երկրորդ տրանշը (Աշտարակ-Գյումրի հատված) իրականացնել երկու փուլով՝ Աշտարակ-Թալին (40կմ), որի գումարը կկազմի 80 մլն. դոլար և Թալին-Գյումրի (48,4կմ), գումարը՝ 100-130 մլն դոլար: Նպատակահարմար է գտնվել նաև երկրորդ տրանշի առաջին փուլի նախապատրաստական աշխատանքները սկսել այս տարի: Մասնավորապես, նախատեսվում է նախապատրաստել և ԱԶԲ ներկայացնել այդ փուլի համար 80 միլիոն դոլարի պարբերական ֆինանսավորման հայտ:

Նա տեղեկացրեց նաև, որ մայիսի 1-ից Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման ԱԶԲ-ի խորհրդատուները կսկսեն իրենց աշխատանքները: Ն. Երիցյանը առաջարկեց նաև հավանություն տալ տեսակոնֆերանսի արձանագրությանը:

## **2. Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ ԱԶԲ ղեկավարության հետ կայացած տեսահաղորդման արձանագրությանը:

2) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝

ա. սկսել Ծրագրի երկրորդ տրանշի առաջին փուլի պարբերական ֆինանսավորման հայտի նախապատրաստման աշխատանքները և պարբերաբար Կառավարման խորհրդին ներկայացնել դրա ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

բ. աջակցել Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման խորհրդատուներին՝ աշխատանքների ժամանակին և արդյունավետ իրականացման գործում:

6. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջակա միջավայրի ազդեցության գնահատման խորհրդատուների և հնեագետի ընտրությունների տեխնիկական առաջադրանքների հաստատում

-----  
(Ձեկուցող՝ Մ. Վարդանյան)

**1. Օրակարգի 6-րդ հարցը՝ ներկայացրեց ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Ա. Վարդանյանը** և նշեց, որ շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել են տեխնիկական առաջադրանքները: Նա ներկայացրեց նաև ՀՀ մշակույթի նախարարության առաջարկը՝ տեխնիկական առաջադրանքում ավելացնելու «Պատմության և մշակույթի հուշարձանների ցուցակագրում, վկայագրում, դրանց պահպանման գոտիների նախագծում ու հուշարձանների վտանգված հատվածների ճշտում» կետը:

**2. ՀՀ ԱԺ պատգամավոր Ա. Մարտիրոսյանը** առաջարկեց, որ խորհրդատուների կողմից իրականացվելիք աշխատանքների ընթացքում քննարկումներ անցկացվեն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

**3. ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանը** նշեց, որ համաձայն ԱԶԲ գործող ընթացակարգի, մինչև Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման զեկույցի վերջնական հաստատումը, այն 120 օր տեղադրված կլինի ինտերնետային կայք-էջերում՝ հանրային քննարկումների համար:

**4. Քննարկումներից հետո որոշվեց** հաստատել Ծրագրի Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման խորհրդատուների և հնեագետի ընտրությունների տեխնիկական առաջադրանքները՝ առանց ՀՀ մշակույթի նախարարության կողմից առաջարկվող լրացումների:

7. «Հողի օտարման և տարաբնակեցման միջանկյալ պլան» փաստաթղթի նախագծին հավանություն տալու մասին

(Մ. Վարդանյան)

1. Օրակարգի 7-րդ հարցը ներկայացրեց ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանը և առաջարկեց հավանություն տալ «Հողի օտարման և տարաբնակեցման միջանկյալ պլան» փաստաթղթի նախագծի:

2. ՀՀ ԱԺ պատգամավոր Ա. Մարտիրոսյանը նշեց, որ ճանապարհի երկայնքով կարող են լինել այնպիսի շինություններ, որոնք ունեն սեփականության վկայական, սակայն հողի օգտագործման կարգավիճակ չունեն, ինչպես նաև կան համայնքներին պատկանող հողեր և հետաքրքրվեց, թե ինչպես են կարգավորվելու նմանատիպ խնդիրները:

3. ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանը նշեց, որ բոլոր հարցերը կկարգավորվեն օրենսդրության շրջանակներում, իսկ առանձին դեպքերը կենթարկվեն առանձին ուսումնասիրությունների:

4. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Ե. Զախարյանը տեղեկացրեց, որ վերջին 3 ամիսների ընթացքում ճանապարհի երկայնքով 70մ աջ և ձախ հատվածով սեփականության ճանաչման վերաբերյալ գործարքները կադաստրի մարմինների կողմից դադարեցվել են:

5. Քննարկումներից հետո որոշվեց հավանություն տալ «Հողի օտարման և տարաբնակեցման միջանկյալ պլան» փաստաթղթի նախագծին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

(ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Մ.ԹՈՒՄԱՍՅԱՆ